ը: Բայց դարձեալ մերթ ընդ մերթ խաւար մթնոլորտը լցւում էր միլիոնաւոր հրեղէն կայծերով, որպէս թէ դրանք դուրս էին վազում մի ահագին հրանօթի բերանից:

Բոցերը, որ սկզբում յայտնոեցան զանազան կէտերի վրայ, հետզհետէ աճելով մի քանիսը միախառնոեցան եւ կազմեցին լայնածաւալ հրեղէն հոսանք: Շրջայկայքը լուսաւորոեցաւ: Այժմ պարզ երեւում էին բարձր պարիսպներ եւ բարձր աշտարակներ: Մի հին ամրոց այրւում էր ծառազարդ շրջապատի մէջ:

Կրակը խանգարեց սպիտակ աղաւնիների գիշերային հանգստութիւնը, որոնք բոյն էին դրած աշտարակների վերին դարանների մէջ: Նրանք շփոթած, սարսափած դուրս թռան իրանց բոյներից եւ խելագարի պէս ճախրում էին, սաւառնում էին աշտարակների կատարների վրայ: Այստեղ այրւում էին նրանց ձագուկները... Ձնային սպիտակ պատառները, խառնոելով այդ սպիտակ թռչունների մրրիկի հետ, հրեղէն լուսաւորութեան մէջ, ներկայացնում էին մի տխուր, սրտաշարժ տեսարան:

Կրակը վրդովեցրեց ախոռատան նժոյգների հանգստութիւնը, որոնք խրտնած, կապակոտոր եղած, դուրս նետոեցան կիսավառ դռանրից, եւ կատաղաբար վազվզում էին ամրոցի շուրջը, ձիւնային փոշիների մէջ: Հմուտ ձիապանների ձեռքի տակ սնոած, փայփայոած անասունների՝ որի գեղեցիկ բաշն էր խանձոած, որի թաւամազ ագին էր այրոած, որը օրհասական տագնապի մէջ, դողդողում էր, ընկնում էր, թաղւում էր ձնային խորութեան մէջ:

Կրակը դուրս քշեց որսորդական շների, բարակների բազմութիւնը, որոնք արծաթեայ վզկապներով, նախշուն, մահուդեայ ջուլերով, մոլորոած, շոարած, չգիտէին, թէ որ կողմը փախչեն: Անտէր, անօգնական թափառում էին տիրոջ սիրելիները եւ իրանց տխուր, մահագուշակ վայուններով հնչեցնում էին ամրոցի շրջակայքը:

Կրակը դուրս քշեց եւ յարեմի փափկասուն գեղեցկուհիներին, որոնք դուրս թռչելով մետաքսեայ անկողիններից, կիսամերկ, հերարձակ, բոբիկ ոտներով վազվզում էին ձիւների մէջ եւ թաքչելու տեղ չէին գտնում: Նրանց լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը խլանում էին ամրոցի կործանող կամարների դղրդիւնի մէջ: Սեւամորթ ներքինիները, շոարած, շփոթած, չգիտէին՝ իրանց գլուխը ազատեն թէ իրանց խանումների պաշտպանութեանը դիմեն:

Այդ բոլորը կատարւում էր հրդեհի լուսաւորութեան մէջ, բոցերի եւ կայծերի փայլատակութեան մէջ: